

Հ Ր Ա Մ Ա Ն N 202-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«10» ՄԱՐՏԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՍԻՐԱՐՓԻ ԳԱՌՆԻԿԻ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆԻՆ ՊՐՈՔԱՑԻԱՅԻ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՄԱՐՄՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-3-22.3-Ղ5-3) ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Պրոքացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալի (ծածկագիր՝ 12-3-22.3-Ղ5-3) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 9-ի եզրակացությունը և Ս. Մուղղուայանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սիրարփի Գառնիկի Մուղղուայանին 2020 թվականի մարտի 11-ից, 12 ամիս փորձաշրջանով, նշանակել Պրոքացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի պետի տեղակալի (ծածկագիր՝ 12-3-22.3-Ղ5-3) պաշտոնում:

2. Փորձաշրջանի ընթացքում Ս. Մուղղուայանի փորձաշրջանը համակարգող նշանակել Պրոքացիայի ծառայության կենտրոնական մարմնի ընդհանուր բաժնի պետ (ծածկագիր՝ 12-3-23.2-Ղ4-1) Աստղիկ Խաչատրյանին:

3. Աշխատավարձը սահմանել՝ 233 474 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ